ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 29

«Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան ՊՈԱԿ-ի Կառավարման խորհրդի 2008թ. մայիսի 26-ին ժամը 17:00-ին ՀՀ Կառավարության նիստերի դահլիճում կայացած հերթական նիստի

Նիստը նախագահում էր.

ՀՀ Վարչապետ, «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան ՊՈԱԿ-ի Կառավարման խորհրդի նախագահ Տիգրան Սարգսյանը

Մասնակցում էին՝

Կառավարման խորհրդի անդամներ.

Արմեն Գևորգյանը	ՀՀ փոխվարչապետ, ՀՀ տարածքային կառավարման նախարար
Վահրամ Ներսիսյանցը	«Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան ՊՈԱԿ-ի Կառավարման խորհրդի փոխնախագահ, ՀՀ Նախագահի տնտեսական հարցերով գլխավոր խորհրդական
Տիգրան Դավթյանը	ՀՀ ֆինանսների նախարար
Ներսես Երիցյանը	ՀՀ էկոնոմիկայի նախարար
Գուրգեն Սարգսյանը	ՀՀ տրանսպորտի և կապի նախարար
Արայիկ Հովհաննիսյանը	«Հայաստանի ավագանիների ասոցիացիա» ՀԿ-ի նախագահ
Վանիկ Սողոմոնյանը	«Ֆերմերների ազգային միավորում» ՀԿ-ի նախագահ
Աշոտ Ոսկանյանը	«Ագրոզարգացում» ՀԿ-ի նախագահ
Կարեն Նազարյանը	Հայաստանի միջեկեղեցական բարեգործական կլոր սեղանի գործադիր տնօրեն

Կառավարման խորհրդի դիտորդներ.

Կարինե Դանիելյանը	«Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան ՊՈԱԿ-ի Կառավարման խորհրդի բնապահպանական դիտորդ, «Հանուն կայուն մարդկային զարգացման ասոցիացիա» ՀԿ-ի նախագահ
Ալեքս Ռասինը	Հայաստանում ԱՄՆ «Հազարամյակի մարտահրավեր» կորպորացիայի գրասենյակի տնօրեն

Նիստից բացակայում էր.

Դավիթ Լոքյանը	ՀՀ գյուղատնտեսության նախարար

Նիստին հրավիրված էին.

Անդրանիկ Անդրեասյանը	ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի նախագահ
Դավիթ Սարգսյանը	ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար

Նիստին մասնակցում էին նաև.

Արա Հովսեփյանը	«Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն
Նորա Մարտիրոսյանը	«Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան ՊՈԱԿ-ի իրավախորհրդատու, Կառավարման խորհրդի քարտուղար
Արմինե Սիմոնյան	«Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան ՊՈԱԿ-ի բնապահպանական և սոցիալական ազդեցության ղեկավար
Սիմոն Ղոնաղչյանը	ՀՀ կառավարության աշխատակազմի տնտեսագիտական վարչության պետ
Մերի Հարությունյանը	ՀՀ կառավարության աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության պետ
Հովհաննես Սահակյանը	ՀՀ կառավարության աշխատակազմի տնտեսագիտական վարչության գլխավոր մասնագետ

Նիստը բացեց «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան ՊՈԱԿ-ի Կառավարման խորհրդի նախագահ, ՀՀ Վարչապետ Տիգրան Սարգսյանը: Քանի որ ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի կառավարման խորհուրդը տվյալ կազմով գումարում էր իր առաջին նիստը, ուստի Արա Հովսեփյանը, ՀՀ Վարչապետի առաջարկով, ներկայացրեց կառավարման խորհրդի՝ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչ անդամներին, դիտորդներին, ինչպես նաև նիստին ներկա ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի աշխատակիցներին:

Միաժամանակ Արա Հովսեփյանը նշեց, որ շահառուների խորհրդի՝ կառավարման խորհրդի պատվիրակների թիվն ընդհանրապես հինգն է, սակայն ներկայումս, հաշվի առնելով, որ առկա է եղել շահերի բախում, պատվիրակներից մեկը հրաժարվել է կառավարման խորհրդում իր անդամությունից, սակայն կազմը շուտով կհամալրվի նոր անդամով:

Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչ/կառավարման խորհրդի անդամները ներկայացրեցին ընդհանուր տեղեկություններ իրենց կողմից ղեկավարվող կազմակերպությունների մասին:

ՀՀ Վարչապետը ողջունեց նիստի ներկաներին և հույս հայտնեց, որ համատեղ աշխատանքը կլինի արդյունավետ և կնպաստի ծրագրի իրականացմանը:

Նիստի օրակարգում ներկայացված էին հետևյալ հարցերը.

1. «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ – Հայաստան» ՊՈԱԿ-ի 2006թ. սեպտեմբերի 1-ից 2007թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածի աուդիտի արդյունքների ներկայացում ի գիտություն:

2. «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ – Հայաստան» ծրագրի Ոռոգվող գյուղատնտեսություն ենթածրագրի Ենթակառուցվածք բաղադրիչի շրջանակներում տեխնիկական խորհրդականի ընտրության արդյունքների և տեխնիկական առաջադրանքի քննարկում և հաստատում:

3. «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան» ծրագրի Մոնիթորինգի և գնահատման պլանի վերանայված տարբերակի քննարկում և հաստատում:

4. «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան» ծրագրի Մոնիթորինգի և գնահատման բաղադրիչի շրջանակներում Գյուղատնտեսական գործունեության հետազոտության հաջորդ փուլերի համար խորհրդատվական ծառայությունների համար դիմած ընկերությունների կարճ ցուցակի և առաջարկների ներկայացման հրավերի քննարկում և հաստատում:

5. «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ -Հայաստան» պետական ոչ առևտրային կազմակերպության և «Գյուղական ֆինանսավորման կառույց» ծրագրերի իրականացման գրասենյակ պետական հիմնարկի միջև կնքված Իրականացման պայմանագրի Հավելված V-ի փոփոխության քննարկում և հաստատում:

6. «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ – Հայաստան» ծրագրի Ոռոգվող գյուղատնտեսություն ենթածրագրի Ենթակառուցվածք բաղադրիչի «Երրորդ կարգի ջրանցքների վերականգնման նախագծում և շինարարության վերահսկում» IA-07/002 խորհրդատվական ծառայությունների մրցույթի տեխնիկական առաջարկների գնահատման արդյունքների քննարկում և հաստատում:

7. Այլ հարցեր՝

   ա/ «Հազարամյակի մարտահրավեր հիմնադրամ - Հայաստան» ծրագրի «Ոռոգվող գյուղատնտեսություն» ենթածրագրի «Ենթակառուցվածք» բաղադրիչի շրջանակներում նախագծվող Արգիճիի ջրամբարի տարածքում հողի սեփականության վերաբերյալ առկա խնդիրների քննարկում:

Օրակարգը հաստատվեց միաձայն:

Նիստի ընթացքում.

Օրակարգի 1-ին հարցը ներկայացրեց ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն Արա Հովսեփյանը:

ՀՀ Վարչապետ Տիգրան Սարգսյանը հարցրեց, թե անցկացված աուդիտից առաջ ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ում աուդիտ անցկացվել է, թե՝ ոչ:

Արա Հովսեփյանը պատասխանեց, որ մինչ այդ ՊՈԱԿ-ում աուդիտ չէր իրականացվել և տվյալ աուդիտը ՊՈԱԿ-ի առաջին աուդիտն է:

Կարեն Նազարյանը նշեց, որ աուդիտի արդյունքների «Ներքին վերահսկողություն» բաժնում նշված է, որ «ՀՄՀ-Հայաստանը չունի ծրագրերի կառավարման կարևորագույն ոլորտների վերաբերյալ բողոքների ստացման, գնահատման և պահպանման ընթացակարգ»: Սակայն այս կետում անհրաժեշտ է ավելացնել, որ բացակայում է նաև արձագանքման մեխանիզմը: Բացի այդ, հաշվետվության մեջ պարզաբանված չէ, թե այդ բացը ինչ կարգով պետք է լրացվի:

Արա Հովսեփյանը պարզաբանեց, որ այստեղ խոսքը գնում է թեժ գծի /«hotline»-ի/ մասին, որը քննարկվել է նաև Գրանթ Թորնթոն Ամիո ընկերության հետ: Տվյալ պահին ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ը այդ կարգի ներքին համակարգ չունի, սակայն այդ հարցը հաշվի կառնվի հետագա գործունեության ընթացքում:

Կարեն Նազարյանն ավելացրեց, որ շատ դրական կլինի, եթե առկա լինի այդպիսի կապ, որպեսզի ցանկացած անձ, հնարավորություն ունենալով պահպանել իր անձի գաղտնիությունը, կարողանա հարցեր և առաջարկներ ներկայացնել ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ին:

ՀՀ Վարչապետ Տիգրան Սարգսյանը հարցրեց, թե արդյոք նմանատիպ հնարավորություն ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի ինտերնետային կայքը չունի:

Արա Հովսեփյանը հայտնեց, որ նմանատիպ հնարավորություն վեբկայքը նախատեսում է, բացի այդ ՀՄԿ-ն ունի տեսուչ, ով կես տարին մեկ անգամ այցելում է Հայաստանի Հանրապետություն և հանդիպումներ ունենում բոլոր շահառու կողմերի հետ՝ հնարավորություն տալով վերջիններիս ներկայացնել իրենց հուզող հարցերն ու բողոքները:

Վահրամ Ներսիսյանցը հարցրեց ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրենի կարծիքը աուդիտ իրականացրած կազմակերպության կատարած աշխատանքի որակի մասին:

Արա Հովսեփյանը հայտնեց, որ ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ը բավարարված է աուդիտորական ընկերության կատարած աշխատանքներով:

Քննարկումներից հետո **միաձայն որոշվեց՝** ընդունել ի գիտություն «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ – Հայաստան» ՊՈԱԿ-ի 2006թ. սեպտեմբերի 1-ից 2007թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածի աուդիտի արդյունքները:

Օրակարգի 2-րդ հարցը ներկայացրեց ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն Արա Հովսեփյանը:

Վահրամ Ներսիսյանցը խնդրեց պարզաբանել, թե հնարավոր է արդյոք դադարեցնել խորհրդատուի հետ կնքված պայմանագիրը, եթե աշխատանքների իրականացման ընթացքում պարզվի, որ վերջինս կեղծ տեղեկություններ է ներկայացրել լեզվի իմացության վերաբերյալ:

Արա Հովսեփյանը պարզաբանեց, որ այդպիսի հնարավորություն միանշանակ առկա է:

Արմեն Գևորգյանը հարցրեց, եթե Հազարամյակի մարտահրավեր ծրագիրը կասեցվի կամ դադարեցվի, արդյոք խորհրդատուն շարունակելու է կատարել պայմանագրով նախատեսված աշխատանքները և վճարվելու դրա համար:

Արա Հովսեփյանը հայտնեց, որ նմանատիպ իրավիճակի առկայության պարագայում խորհրդատուի հետ կնքված պայմանագիրը ևս դադարեցվում է:

ՀՀ Վարչապետ Տիգրան Սարգսյանը հարցրեց, թե ինչ ժամկետով է կնքվելու պայմանագիր տվյալ խորհրդատուի հետ:

Արա Հովսեփյանը հայտնեց, որ խորհրդատուի հետ պայմանագիրը կնքվելու է մինչև Հազարամյակի մարտահրավեր ծրագրի վերջը, այն է՝ 2011թ. սեպտեմբեր ամիսը:

Արայիկ Հովհաննիսյանը խնդրեց պարզաբանել տեխնիկական առաջադրանքում ներկայացրած այն տեղեկատվությունը, համաձայն որի խորհրդատուն աշխատանքները պետք է իրականացնի 5 ամիս տևողությամբ:

Արա Հովսեփյանը պարզաբանեց, որ Հայաստան կատարվող՝ խորհրդատուի յուրաքանչյուր այցը պետք է տևի մոտ 5 ամիս, որից հետո վերջինս մեկ ամսով ընդմիջում է ունենում և այդ մեկ ամսից հետո նորից 5 ամսով այցելում է ՀՀ: Այդպես աշխատանքներն իրականացվում են մինչև պայմանագրի ավարտը: Ընդմիջման ընթացքում խորհրդատուն չի վարձատրվում:

Քննարկումներից հետո **<u>միաձայն</u> որոշվեց՝** հաստատել «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ – Հայաստան» ծրագրի Ոռոգվող գյուղատնտեսություն ենթածրագրի ենթակառուցվածք բաղադրիչի շրջանակներում տեխնիկական խորհրդակցի ընտրության արդյունքները և տեխնիկական առաջադրանքը:

Օրակարգի 3-րդ հարցը ներկայացրեց ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն Արա Հովսեփյանը:

Աշոտ Ոսկանյանը հայտնեց, որ ներկայացված տեղեկանքում նշված է, որ Մոնիթորինգի և գնահատման պլանը մինչև օգոստոս-սեպտեմբեր ամիսները ևս մեկ անգամ ենթակա է փոփոխման, այդ պարագայում արդյոք ավելի նպատակահարմար չէ ի սկզբանե անել մեկ փոփոխություն, քանի որ ակնհայտ է, որ երկու փոփոխությունների միջև ընկած ժամանակահատվածը կազմելու է առավելագույնը մեկ-երկու ամիս:

Արա Հովսեփյանը հայտնեց, որ տվյալ հարցը քննարկվել է ՀՄԿ-ի հետ, սակայն վերջիններս առաջարկել են արդեն իսկ փոփոխել պլանում առկա աշխատանքային ցուցանիշները, իսկ հետագայում, երբ հայտնի լինեն ծրագրային ցաւցանիշները՝ կատարել երկրորդ փոփոխությունը:

Կարեն Նազարյանը հայտեց, որ պլանի ընդհանուր ուսումնասիրությունից կարելի է եզրակացնել, որ շահառուների դերը այստեղ չի երևում, այնինչ ցանկացած ծրագիր արդյունավետ է լինում, եթե շահառուներն անմիջական մասնակցություն են ունենում մոնիթորինգի գործընթացին, ուստի նպատակահարմար է, որ շահառուները ևս մասնակցություն ունենան այս գործում:

Արա Հովսեփյանը ողջունեց առաջարկը, և հայտնեց, որ անհրաժեշտ է հանդիպել և պայմանավորվածություն ձեռք բերել այն հարցի շուրջ, թե ինչպես պետք է շահառուները և շահառուների խորհուրդը ներառվեն մոնիթորինգի իրականցման գործընթացում: Միաժամանակ պարոն Հովսեփյանն ավելացրեց, որ ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ը մոնիթորինգի և գնահատման իրականացումը հիմնականում կապում է ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության և համապատասխան վարձվող ընկերության հետ, քանի որ հենց վերջիններս են հանդիսանում ոլորտի մասնագետներ:

Վանիկ Սողոմոնյանն առաջարկեց Կառավարման խորհրդի նորանշանակ անդամներին ծանոթանալ Հազարամյակի մարտահրավեր ծրագրի շրջանակներում կնքվող ճանապարհաշինական պայմանագրերին և դիտարկել պայմանագրում ճանապարհների որակի հետ կապված ավելի խիստ պայմաններ նախատեսելու հնարավորությունը:

Արայիկ Հովհաննիսյանը խնդրեց պարզաբանել, թե ինչ է նշանակում տեղեկանքում ներկայացված այն դրույթը, որ ՀՄՀ-Հայաստան ծրագրային բաղադրիչների շրջանակները ենթարկվում են փոփոխության:

Արա Հովսեփյանը հայտնեց, որ ըստ էության Հազարամյակի մարտահրավեր ծրագրի շրջանակներում իրականացվող աշխատանքները կրճատվում են՝ ելնելով ԱՄՆ դոլարի արժեզրկումից և շինարարական աշխատանքների արժեքի բարձրացումից: Ընդ որում ծրագրով նախատեսված, սակայն գումարի անբավարարության պատճառով չիրականացված միջոցառումները կիրականացվեն ՀՀ պետական բյուջեի, կամ ՀՀ Կառավարության կողմից ներգրավված որևէ այլ միջոցներով, ինչպես մի քանի անգամ նշվել է ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի կառավարման խորհրդի նախորդ նիստերի ժամանակ:
Ամեն դեպքում, մոնիթորինգի և գնահատման պլանը գնահատում է զուտ ՀՄԿ-ի կողմից տրամադրված միջոցների շրջանակներում կատարված աշխատանքների արդյունքը:

Գուրգեն Սարգսյանն ավելացրեց, որ Հազարամյակի մարտահրավեր ծրագրի հիմնական չափանիշը գումարն է և հաշվի առնելով ԱՄՆ դոլարի արժեզրկումը և գնաճը, ներկայումս նախատեսված գումարով հնարավոր է իրականացնել մոտ երեք անգամ ավելի քիչ աշխատանք, քան նախատեսվում էր ծրագրի ստորագրման պահին:

ՀՀ Վարչապետ Տիգրան Սարգսյանը հայտնեց, որ ՀՀ Կառավարությունը ևս կիսում է առաջ քաշված մտահոգությունը:

Տիգրան Դավթյանն առաջարկեց ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ին՝ կառավարման խորհրդի հաջորդ նիստում ներկայացնել տեղեկատվություն ծրագրի մեկնարկից առ այսօր տեղի ունեցած գնաճի պատճառով նվազեցված աշխատանքների ծավալի և գնի վերաբերյալ, մասնավորապես շեշտադրելով ճանապարհաշինարարական ծրագրերը:

Արա Հովսեփյանն ընդունեց պարոն Դավթյանի առաջարկը:

Վահրամ Ներսիսյանցն ավելացրեց, որ անհրաժեշտ է գնահատել նաև ռիսկերը այն դեպքերի համար, եթե ՀՄԿ-ի ֆինանսավորումը դադարեցվի:

Քննարկումներից հետո **<u>միաձայն</u> որոշվեց՝** հաստատել «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան» ծրագրի Մոնիթորինգի և գնահատման պլանի վերանայված տարբերակը:

Օրակարգի 4-րդ հարցը ներկայացրեց ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն Արա Հովսեփյանը:

Արայիկ Հովհաննիսյանը հայտնեց, որ կարծում է ավելի նպատակահարմար կլինի հաշվետվության պահանջներում բացի գյուղապետերից ներգրավել նաև ավագանու ներկայացուցիչների:

Առաջարկից հետո **<u>միաձայն</u> որոշվեց՝** հաստատել «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան» ծրագրի Մոնիթորինգի և գնահատման բաղադրիչի շրջանակներում Գյուղատնտեսական գործունեության հետազոտության հաջորդ փուլերի համար խորհրդատվական ծառայությունների համար դիմած ընկերությունների կարճ ցուցակը և առաջարկների ներկայացման հրավերը:

Օրակարգի 5-րդ հարցը ներկայացրեց ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն Արա Հովսեփյանը:

ՀՀ Վարչապետ Տիգրան Սարգսյանը հարցրեց, թե ինչու է փոփոխվում ԳՖԿ ՊՀ-ի կողմից ներկայացվող հաշվետվությունների ցանկը:

Արա Հովսեփյանը պարզաբանեց, որ փոփոխությունը կատարվում է զուտ աշխատանքային գործընթացի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով:

Պարզաբանումից հետո **<u>միաձայն</u> որոշվեց՝** հաստատել «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ -Հայաստան» պետական ոչ առևտրային կազմակերպության և «Գյուղական ֆինանսավորման կառույց» ծրագրերի իրականացման գրասենյակ պետական հիմնարկի միջև կնքված Իրականացման պայմանագրի Հավելված V-ի փոփոխությունը:

Օրակարգի 6-րդ հարցը ներկայացրեց ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն Արա Հովսեփյանը:

Անդրանիկ Անդրեասյանը հայտնեց, որ տվյալ խորհրդատվական ընկերության հետ պայմանագրի կնքումը շատ կարևոր է Հազարամյակի մարտահրավեր ծրագրի Ոռոգման բաղադրիչի իրականացման համար:

<u>Միաձայն</u> որոշվեց՝ հաստատել «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ – Հայաստան» ծրագրի Ոռոգվող գյուղատնտեսություն ենթածրագրի ենթակառուցվածք բաղադրիչի «Երրորդ կարգի ջրանցքների վերականգնման նախագծում և շինարարության վերահսկում» IA-07/002 խորհրդատվական ծառայությունների մրցույթի տեխնիկական առաջարկների գնահատման արդյունքները:

Օրակարգի 7-րդ հարցի ա/ կետը ներկայացրեց ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն Արա Հովսեփյանը:

Արմեն Գևորգյանը հարցրեց, թե արդյոք ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ն ուսումնասիրել է անհրաժեշտ քանակությամբ հողերի առկայությունը պետական պահուստային ֆոնդում:

Արա Հովսեփյանը հայտնեց, որ նմանատիպ ուսումնասիրություն չի իրականացվել:

ՀՀ Վարչապետ Տիգրան Սարգսյանը հարցրեց, թե ջրամբարի թասում տեղակայված հողերը քանի մասնավոր սեփականատիրոջ են պատկանում:

Արա Հովսեփյանը պարզաբանեց, որ ՀՀ Գեղարքունիքի մարզի Գեղհովիտ համայնքի ղեկավարի ներկայացրած տեղեկատվության համաձայն մասնավոր սեփականատերերի թիվը 41 է, իսկ ՀՀ Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի տվյալների համաձայն՝ 834:

Արայիկ Հովհաննիսյանը խնդրեց պարզաբանել, թե արդյոք այդ անձինք հանդիսանում են հողի օրինական սեփականատեր և ունեն համապատասխան սեփականության վկայական:

Արմինե Սիմոնյանը պարզաբանեց առկա իրավիճակը և ներկայացրեց ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի ունեցած ամբողջ տեղեկատվությունը:

Արմեն Գևորգյանը խնդրեց Կառավարման խորհրդի նախագահ, ՀՀ Վարչապետ Տիգրան Սարգսյանին՝ տրամադրել մեկ շաբաթ ժամանակ համապատասխան իրավասու մարմինների հետ քննարկումներ ունենալու և արդյունքները Կառավարման խորհրդին ներկայացնելու համար:

Կարինե Դանիելյանը հայտնեց, որ կարևոր է նաև ուսումնասիրել տարածքում բնակվող քաղաքացիների կարծիքները:

Արմեն Գևորգյանը պարզաբանեց, որ համապատասխան հանձնարարական կտա այդ միջոցառումներն իրականացնելու համար:

ա/ կետի վերաբերյալ <u>միաձայն</u> որոշվեց՝ «Հազարամյակի մարտահրավեր հիմնադրամ - Հայաստան» ծրագրի «Ոռոգվող գյուղատնտեսություն» ենթածրագրի «Ենթակառուցվածք» բաղադրիչի շրջանակներում նախագծվող Արգիճիի ջրամբարի տարածքում հողի սեփականության վերաբերյալ առկա խնդիրների վերաբերյալ տեղեկատվությունն ընդունել ի գիտություն և հարցի քննարկումը հետաձգել մինչև Կառավարման խորհրդի հաջորդ նիստ:

Կարեն Նազարյանը տեղեկացրեց, որ ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի շահառուների խորհրդի նիստերի ընթացքում ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի կառավարման խորհրդի անդամ հանդիսացող շահառուների խորհրդի ներկայացուցիչները խորհրդի մյուս անդամներին տեղեկատվություն են տրամադրում Կառավարման խորհրդում քննարկված հարցերի մասին, սակայն ըստ էության կապը միակողմանի է, մինչդեռ շատ կարևոր է նաև Կառավարման խորհրդում ներկայացնել շահառուների խորհրդում կայացած քննարկումների արդյունքները և խնդրահարույց հարցերը:

ՀՀ Վարչապետ Տիգրան Սարգսյանը ողջունեց առաջարկը և Կառավարման խորհդրի անունից պատրաստակամություն հայտնեց նիստերի ժամանակ անդրադառնալու նաև շահառուների խորհրդի կողմից բարձրացված հարցերին:

Հարցերի սպառումից հետո նիստն ավարտվեց:

«ՀԱԶԱՐԱՄՅԱԿԻ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐ» ՀԻՄՆԱԴՐԱՄ-ՀԱՅԱՍՏԱՆ»
ՊՈԱԿ-Ի ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ,
ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ Տ. ՍԱՐԳՍՅԱՆ

Նիստը արձանագրեց՝
«ՀՄՀ-Հայաստան» ՊՈԱԿ-ի իրավախորհրդատու,
«ՀՄՀ-Հայաստան» ՊՈԱԿ-ի Կառավարման Խորհրդի քարտուղար
Ն. Մարտիրոսյան